

ուու չէ հաւանականութենէ որ անկէ վերջն ալ Երեմիա առիթներ ունեցած ըլլայ այցելելու Թէքիրտաղ ու հոն բարեկամներու և ծանօթներու շրջանակ մը կազմած ըլլայ քահանաներէն ու ժողովուրդի առաջաւորներէն: Զայս կը հաստատէ ԴՍ. ԶԻՆՁ Է (= 1689) թուին «Երջանկափառ քահանայից, Թէքիրտաղու բարեկամից» ձօնած իր առաջին Ուղերձը (Յաւել. էջ 537-540), որու մէջ յակննէ անուանէ կը յիշէ իր բարեկամ տեղացի քահանաներու և աշխարհականներու անունները:

Անշուշտ այդ նորահաստատ ծաղկեալ ու հայաշատ գաղութին ուրախութիւն մը պատճառելու դիտումով է որ Երեմիա իր վարդապետ որդին Կ. Պոլիս ժամանելուն երրորդ օրը կը տանէր Թէքիրտաղ, որպէսզի Ս. Ծննդեան տօնը հոն անցընէր ու իր քարոզներով մխիթարէր տեղին ազգայինները:

Սիստ հետաքրքրական և ուշագրաւ է Զէլէպիի Թէքիրտաղէն նորընտիր Նահապետ կաթողիկոսի ուղղած երկարաշունչ նամակը (Յաւել. էջ 478-485): Այդ նամակով Զէլէպի Եղիազարի վախճանումին առթիւ իր վշտակցութիւնը յայտնելէ ու յաջորդին՝ այսինքն Նահապետ կաթողիկոսին համար մաղթանքներ ընելէ ետք՝ կը յարէ թէ լուսահողին, իր բարերարը՝ հայրն ու երախտաւորը, իր հուսկ օրհնութիւնը ձօնած է իր զաւկին՝ Գրիգորիս վարդապետի, անոր՝ որուն հայրն ու պապը և պապերուն պապերը սկիզբէն ի վեր անընդմիջաբար սիրելի եղած են թէ՛ Ս. էջմիածնի և թէ՛ անոր գահակալներուն: Սոյն այս Գրիգորիս վրդ. ևս իր նախնիքներուն նման արժանացած է հոգելոյս հայրապետի օրհնութեան և լուսահողիէն հետը բերած է իրեն ուղղեալ նամակ մը: Ապա կ'անցնի նկարագրութեան նոյն Աստուածայայտութեան տօնին՝ 1692ին տեղի ունեցած Ռոտոսթոյի (Ռօզօն փոքր) եկեղեցիին